Կարծիք

Արթուր Ռազմիկի Դավթյանի «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող աշխատանքի թեմայի հետազոտությունը պայմանավորված է հայ հասարակության առջև ծառացած սոցիալ-տնտեսական մարտահրավերներով. սեփականության իրավունքի երաշխավորված պաշտպանության կառուցակարգի կատարելագործմամբ, որն իր հերթին կխթանի տնտեսությունում տեղական և արտասահմանյան ներդրումների գործընթացը:

Ցանկացած քաղաքացիական հասարակության և տնտեսության համար դժվար է գոյատևել, առավել ևս զարգանալ, եթե իրավաբանորեն (նաև դատական կարգով) պատշաճ պաշտպանված չէ սեփականության ինստիտուտը և սեփականատիրական հարաբերությունները:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների անկյունաքարը՝ սեփականության իրավունքի իրականացման կառուցակարգն է և դրա հետ կապված իրավակարգավորումների սոցիալական բնույթը: Ժամանակակից հայոց ազգային իրավակարգում և տնտեսությունում սեփականության իրավունքը ձեռք է բերել սոցիալական նշանակություն և սոցիալ-իրավական արժեքի կարգավիճակ:

Հետազոտության օբյեկտն է սեփականության ինստիտուտը՝ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից:

Հետազոտության առարկան սեփականության ինստիտուտի էությունն ու բովանդակությունն է, ինչպես նաև դրանց առանձնահատկությունները ժամանակակից հիմնական իրավական համակարգերում՝ մայրցամաքային և ընդհանուր (նախադեպային) իրավունքում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է սեփականության ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությունը, նրա սոցիալական և իրավական առումների բացահայտումն է՝

ազգային և տարբեր իրավական համակարգերում:

Դրված նպատակն իրականացնելու համար հեղինակն իր առջև խնդիր է դրել՝

- վերլուծել սեփականության ինստիտուտի բնութագրիչ հատկանիշները,
- բացահայտել սեփականության ինստիտուտի սոցիալական, տնտեսական նշանակությունը,
- վերլուծել սեփականության ինստիտուտի բովանդակային առանձնահատկությունները ռոմանագերմանական և անգլոամերիկյան իրավական համակարգերում,
- բացահայտել սեփականության ինստիտուտի նշանակությունը քաղաքացիական հասարակության կայացման և հասարակական առաջընթացի համար:
- վերլուծության ենթարկել սեփականության ինստիտուտի պաշտպանության հիմնախնդիրը ազգային և միջազգային իրավական համակարգերում ու իրավակիրառ պրակտիկայում:

Աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է հետևություն անել, որ հեղինակը պատշաճ գիտական մակարդակով է լուծել իր առջև դրված խնդիրները և կատարել է տեսական ու գործնական նշանակության առաջարկություններ և եզրակացություններ:

Քննարկվող **հետազոտության գիտական նորույթն**, ամենից առաջ, արտահայտվում է սեփականության ինստիտուտի բովանդակության բացահայտման նորարարությամբ, այն է՝ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից մշակվել է հիմնադրույթներ և նոր մոտեցումներ, որոնց հանրագումարը քննարկվող հիմնախնդրի գիտական լուծում է, որն ունի աշխարհայեցակարգային և սոցիալ-իրավական նշանակություն:

Հետազոտության արդյունքները նորովի են լուսաբանում սեփականության ինստիտուտի էությունը, բովանդակությունը, սոցիալական նշանակությունը և սույն աշխատանքում այն դիտարկվում է որպես հասարակության առաջընթաց զարգացման նախադրյալ և քաղաքացիական հասարակության կայացման նախապայման, ինչպես նաև մարդու իրավունքների իրական գործադրման նյութական պատվար և անձի իրական ազատության նախապայման:

Դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, ունեմ նաև որոշակի առաջարկություններ-նկատառումներ աշխատանքի վերաբերյալ:

Առաջին, գտնում եմ, որ հեղինակը առավել խորությամբ անհրաժեշտ էր կանգ առել սեփականության ինստիտուտի բովանդակության երեք իրավազորությունների տիրապետման, օգտագործման և օտարման գոյաբանական և իմացաբանական առումների վրա՝ ինչպես գործող օրենսդրական կարգավորումներում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում:

Երկրորդ, աշխատանքում տեղ են գտել որոշակի խմբագրական և ոճաբանական թերացումներ, որոնք ունեն մասնակի բնույթ և կարելի է շտկել հետագա հետազոտական աշխատանքում:

Նշված դիտողություններն, ըստ էության, ցանկություններ են և ամենևին չեն նսեմացնում աշխատանքի դրական բովանդակության վրա:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսական աշխատանքի հիմնական բովանդակությունը:

Քննարկվող աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտահայտումն են գտել հեղինակի հրատարակված գիտական հոդվածներում և մենագրություններում:

Ելնելով վերաշարադրյալից գտնում եմ, որ Արթուր Ռազմիկի Դավթյանի վերոնշված թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող հետազոտություն է, որը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի Կանոնակարգով սահմանված կանոնների պահանջները, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների թեկնածու՝

Հովհաննես Զավենի Սարգսյան

Հովհաննես Զավենի Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ
Մերուժ Մաշտոցի անվ. համալսարանի պրոռեկտոր՝ **Գ.Սարգսյան**